

ՆՈՐ-ՋՈՒՂԱՅԻ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔԸ

Շահ-Աբաս-մեծը, իր տարագրած հայ-ժողովրդի սիրտը Պարսկաստանի հետ կապելու և նրանով իր ազգը լուսաւորելու նպատակով, ինչպէս յայտնի է, շնորհեց նրան զանազան արտօնութիւններ, որոնց մէջ առաջին տեղն է զբաւում կրօնական ազատութիւնը:

Երբոր հայերը հասան Սպահան և հիմնեցին Նոր-Ջուղան (1606 թ.), Մեծ-Մէյդանի թաղում շինեցին մի շատ անպաճոյճ և անչուք վանք՝ տալով նրան Հին-Ջուղայում ունեցած «Ամենափրկիչ» վանքի անունը: Յետոյ 1651 թ. ահա ին, քանդելով նախկին կառուցածը, հասարակութեան հանգանակութեամբ և Դաւիթ առաջնորդի հսկողութեամբ ինն տարուայ ընթացքում վերջացաւ այժմեան փառաւոր վանքը, որի բակում դնտուղ հոյակապ զանգակատունը կառուցուել է 1702 թ. Յովհաննջան Ջամալեանցի ծախքով: Վանքն ունի եօթն զանազան երեսներ կամ բակեր *):

Եկեղեցին, որ կառուցուած է առաջնորդարանի և զանգակատան երեսների մէջ տեղում, կրում է Յովսէփ Արեմաթացու անունը (նրա մասունքը ունենալու պատճառով), և որի տօնի օրն էլ կատարում է վանքի տօնախմբութիւնը: Եկեղեցու բոլոր պատերը ներսի կողմից, բարձրաբերձ կաթուղիկէից մինչև երկու արշին մնացած յատակին, զարդարուած է հին և նոր կտակարաններից և ազգային-եկեղեցական սլաւամութիւնից

*) Հին յիշատակարաններում վանքին արւած է «սարափելի» անուանը:

նիւթ վերցրած իւղաներկ պատկերներով և ոսկեզօծ ծաղկանկարներով: Իսկ ամբողջ եկեղեցու շուրջը, ուղիղ յատակից մինչև նկարների մօտը, դարդարուած է ամենաընտիր դարդանկարուած յախճապակիով: Պատմութիւնը այս եկեղեցու գեղեցիկ նկարների դործը տալիս է «տիեզերալոյս» Յովհաննէս անունով մի տեղացի վարդապետի. սակայն բոլոր նկարների շքեղութիւնը ընդհանրապէս, իսկ ոմանց նրբութիւնը մասնաւորապէս վկայում են, որ աւելի իտալացի հմուտ նկարչի դործ է (որը չի մոռացել բեմի առաստաղին նկարուած 12 առաքեալները մէջ՝ արքայութեան բանալիները դնել Պետրոսի ձեռքը), քան մի հայ վարդապետի: Նկարների մէջ նրբութեան կողմից առաջին տեղն են բռնում խաչելութեան և խաչից իջեցնելու նկարները, իսկ շքեղութեան կողմից ամբողջ հիւսիսային պատը բռնող՝ դատաստանի նկարը:

Այս եկեղեցին միւս եկեղեցիների նման կանանց և տղամարդկանց առանձին բաժանմունքներ չ'ունի, որովհետև կառուցման ժամանակից մինչև մի քանի տարի արանից առաջ ժողովրդական եկեղեցի չէր և հետեապէս կանանց մուտքը խստիւ արգելուած էր այստեղ: Եկեղեցու երկայնութիւնը մինչ ընդարձակ բեմը մօտ 53 ոտնաչափ է, իսկ լայնութիւնը 41 ոտնաչափ: Գմբէթը բարձրադիր է, և վրան ինչպէս և բոլոր միւս եկեղեցիների գմբէթների վրայ հանգչում է փայլուն և լաղթական խաչ:

Սոյն Ամենափրկչեան վանքը միևնոյն ժամանակ Պարսկաստանի և Հնդկաստանի ընդարձակ թեմի արքեպիսկոպոսանիստ առաջնորդարանն է, որի հոգևոր իշխանութեան ներքոյ են գտնուում Անդալիից մինչև Բուշիրը, ամբողջ Հնդկաստանը, Բիրմանստանը և Ճաւայի կղզիները:

Ունի իր առաջնորդական խորհրդարանը, ուր վճռում են Նոր-Ջուղայում տեղի ունեցած բոլոր վէճերը և դատերը ոռանց կառավարական Բ. Դրան դիմելու, նոյնպէս բոլոր թեմի հոգևոր գօրծերը: Խորհրդարանի նախագահն է թեմակալ առաջնորդը, իսկ անդամներն են՝ վանքի միաբանները և մի քանի քահանաներ:

Ամենափրկչեան վանքի առաջնորդը իր ընդարձակ թեմի ժողովրդի ոչ միայն հոգևոր տէրն և իշխանն է ճանաչուած կառավարութեան մօտ, այլև մարմնաւոր պետը, ներկայացուցիչը և դատաւորը: Թեմակալ առաջնորդը Ս. Էջմիածնից իր աթոռը

հասնելիս, թէ Թէհրանում և թէ այստեղ Սպահանում, կառավարութիւնից տրուում է նրան ֆարմաններ՝ վերոյիշեալ արտոնութիւնների և իրաւունքների համար:

Ամենափրկիչ վանքի առաջին առաջնորդն էր Սերովք 1605—1613. նրանից յետոյ Ռաչատուր Ա. Կեսարացին, որ տեղական ոյժերով տպարան հաստատեց—1620—1646. ապա Դաւիթ Ա. Զուղայեցի, որ սկիզբն դրեց վանքի երկրորդ շինութեան 1652—1688. Ստեփաննոս Զուղայեցի, որ 1688—ին լուսաւորչական և պապական հայերի միջև ծագած խռովութիւնների ժամանակ մեծ դեր խաղաց և տպագրեց «Հակաճառութեան» գիրքը, 1697—ին էջմիածնից հրաւիրուեց գահնկեց Նահապետի տեղ կաթողիկոսանալու, բայց Նահապետի կուսակիցների չարախօսութեամբը մատնուեց Երևանի խանի ձեռքը, և 1000 թուման տուգանքի ենթարկուելով՝ դրուեց բանտ, ուր և մեռաւ 1698—ին: Սրա յաջորդը՝ Աղէքսանդր Զուղայեցի, որ 1706—ին ամբողջ ազգի ընտրութեամբ և արքունական հրովարտակով գնաց էջմիածին և կաթողիկոս կարգուեց մինչև մահը: 1706—1725 Մովսէս Ա. Զուղայեցի, որի ժամանակ տեղի օւնեցաւ ավղանների յարձակումն Սպահանի վրայ և Նոր-Զուղան անտանելի ցաւերի ենթարկուեց:

Յաջորդ առաջնորդներից նշանաւոր են. Յարութիւն 1801—1810, որ Գէորգ եպիսկոպոսի հետ միասին աշխատեցին ազատել վանքը իր 4000 թուման պարտքից և յաջողեցան էլ Հնդկաստան և Ռուսաստան ուղարկած նուիրակների հանգանակութեամբ:

Յովհաննէս Բ. 1832—1736, էջմիածնի միաբան, որի ժամանակ սով ընկնելով, կարողացաւ փրկել ժողովուրդը սովից և ազատել Նոր-Զուղան Փաթալի-չահի մահուան պատճառով ծագած խռովութիւնից և աւարառութիւնից:

Յովհաննէս Սուրենեան 1842—1848 զրիմցի. սա գնեց վանքի համար «Սիմէոնեանց» տունը, որը վանքի այժմեան արդիւնաբեր կալուածների առաջինն է:

Թադէոս Բէգնազարեան Երևանցի 1851—1863, որ ուղարկուեց Ներսէս աշտարակցու ընտրութեամբ, և որի սիրելին ու հաւատարիմն էր: Սրա խոհեմ և աշխուրջ կառավարութեան շնորհիւ թէ վանքը, թէ եկեղեցիները և թէ գաւառները ձեռք բերին մի շարք յետ խլուած և բռնաբարուած արտօնու-

թիւներն ու իրաւունքներն, որոնք պատկառելի դարձրին առաջնորդին՝ *)

Մովսէս դանձակեցի 1874—1871, որի ժամանակ կառուցուեց Ամենափրկ. վանքի առաջնորդարանը:

Գրիգորիս Յովհաննիսեան 1872—1888, ֆիլիպպուպոլսեցի, Պոլսի Ազգ. Կենտրոնական Վարչութեան» կրօնական ժողովի այժմեան ասենապետը, որի ժամանակ կառուցուեց տղայոց «Կենտրոնական դպրոցը»:

Մաղաքիա Տէրունեան 1898—1900, որի ժամանակ կառուցուեց «ս. Կատարինեան» օրիորդաց դպրոցը:

Ամենափրկ. վանքի արդիւնքը գոյացւում է հետեւեալ աղբիւրներից—Դրամագլխի տոկոս, վիճակաւոր քահանաների տարեկան տուրք, կալուածների վարձ, Թագաւորական պարգև, դաւաճներից և քաղաքներից ստացած նուէրներ, ժողովուրդի տարեկան տուրք, ձեռնադրութեան և ամուսնութեան համար վճարելիք նուէր, և այլ մանր-մունր հասոյթներ:

Վանքի անշարժ կալուածքներն են. 30 կրպակներ և խանութներ, 1 տօնավաճառի հրապարակ, 1 անտառ, 6 տներ և 20 այգիներ: Բոլոր կալուածքները չափւում են 180 քառակուսի ջրիւր:

Թեմակալ առաջնորդը ստանում է 500 պարսից դրան (85 ռուբլի) ամսական ոռճիկ և բոլոր ծախքերը:

Ամենափրկչեան վանքը իր հիմնարկութեան օրից ի վեր՝ ունեցել է հարուստ մատենադարան, լիքը հայրենիքից իրանց հետ բերած թանկագին գրչագրերով: Նոր-Ջուղան երբեմն ներկայացնում էր մի մտաւոր կենտրոն... վանքը այն ժամանակներում կարող էր Հայաստանի ամենահարուստ գրադարանը համարուել: Սակայն 1750—1790-ական թւականներին, Պարսկաստանում տիրող հարստահարութիւնների ու բռնութիւնների ժամանակ, երբ ամեն մէկը հազիւհազ իր գլուխը պահելու հոգսըն էր քաշում, հին ձեռագիր գրքերից շատ շատերը կամ անդառնալի կերպով անհետացան մէջ սեղից և կամ չնչին գներով վաճառուեցին պարսիկ դեղավաճառներին և վառօդադործներին:

*) Ունի առանձին կենսադրութիւն. գինն է 30 կոպ.

Այժմեան մնացած ձեռագրերի թիւը հասնում է 350-ի. Հին մագաղաթեայ գրչագրերից ոմանք վանքի միաբանների տպագրութեան շնորհիւ զրկուել են իրանց ոսկեզօծ և իւղաներկ ընտիր պատկերներից, ճակատագրադրերից և յուսանցադարդերից, զորս դառնալով խաչագողների շահամուլթեան:

Այս մատենադարանում, բացի գրչագրերից, կան և բաւական քանակութեամբ տպագիր գրքեր հին գրականութիւնից: Վերջերս հոգեւոր իշխանութիւնը ուշադրութիւն է դարձրել և և կարելի եղածին չափով աշխատում է ճոխացնել նոր գրականութեամբ ևս:

Նոր-Ջուղայի, ինչպէս և բոլոր հայաբնակ գիւղերի և քաղաքների եկեղեցիներում, առանց բացառութեան, կան շատ կամ քիչ թւով գրչագիրներ, որոնցից շատերը մագաղաթեայ են: Բացի սրանցից, դանազան անհասնների տներում էլ գտնուում են այդ գրչագիրներից, որոնցից ոմանք գրուած են հէնց տեղն ու տեղը Նոր-Ջուղայում և թի դառն ժամանակի: Յանկալի էր, որ հոգեւոր իշխանութեան ձեռքով այս բոլորը հաւաքուէին Ամենափրկչեան վանքի մատենադարանը, և կազմուէր մի պատկառելի և վանքին պատկարբեր մատենադարան: Այդ դէպքում, ամենայն հաւանականութեամբ, Ամենափրկչեան մատենադարանը կ'ունենայ աւելի քան 1000 օրինակ զանազան գրչագրեր *):

Նոր-Ջուղայում տպարանական գործի սկսուածքը հրաչքի պէս մի բան է լինում: Վանքիս առաջնորդ Խաչատուր կեսաբացին իր միաբան ընկերներով մամուլ է չինում, տառեր է ձուլում, թուղթ է պատրաստում և այնպէս կարգի բերելով մի տպարան, 1640 թւին տպագրում է «Վարք հարանց» անունով գիրքը: Պարզ է, որ առանց մասնագէտ վարպետի, այլ հէնց այնպէս՝ ինքնահնար միջոցներով գլուխ բերուած առաջին տպագրութիւնը պէտք է ունենար մի խումբ խոշոր թերութիւններ և ունեցաւ էլ. սակայն ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ այդ բոլորը ամեն նպաստաւոր միջոցներից զուրկ և մահմէդական յետ ընկած մի քաղաքում ճշնող մի խումբ հայ կրօնաւորների արդիւնք է, մարդ ապշում, հիանում է:

Խաչատուր կեսաբացին 1639 թւին Եւրոպա է ուղար-

*) Գալուստ Զեքմագանեանը 1853 թւին գնել է Նոր-Ջուղայից 120 հատոր ձեռագիր աւետարան և հետք տարել Գովհատ:

կում իր աշակերտներից մէկին՝ Յովհաննէս վարդապետին, որ-
պէսզի տպագրութեան արհեստը սովորելով վերադառնայ իր
սկսածը կատարելագործելու:

Յովհաննէս վարդապետը մի ամբողջ տարի թափառելով,
վերջը կանգ առաւ Խալիլայում, չրջեց Վահետիկ ու Հռոմ,
Լիվորնո և Ամստերդամ և մի շարք խոչընդոտների զիմադրելուց
յետոյ վերջապէս յաջողեցաւ բերել Նոր-Ջուղա մի տպարան
իր յարմար տառերով: 1647 թւին նա հրատարակեց «Պարզա-
տումար» անունով գիրքը, և մտադրութիւն ունէր գործը շա-
րունակելու, երբ ինչ-ինչ պատճառներով ստիպուած եղաւ գը-
նալ Էջմիածին: Յովհաննէս վարդապետի հետանալով տպարա-
նըն էլ փակման դատապարտուեց:

1688 թւին Ստեփաննոս եպիսկոպոսի շնորհիւ կրկին
բացուեց այս տպարանը և տպագրուեց նոյնի հեղինակած
«Գիրք հակաճառական ընդդէմ պապականաց»: Յետոյ մի միջոց
էլ այսպէս քարշ գալով նորից փակուեց:

1844-ին բառաւիարնակ Նոր-Ղուղայեցի Մանուկ Յորդա-
նանեանը ուղարկեց Ամենափրկիչ վանքի համար մի տպագրա-
կան մամուլ իր բոլոր պարագաներով: Այս հին սխաբեմի մա-
մուլը կարգի բերող չ'ունենալուն պատճառով մինչև 1872
թւականը մնում է անգործածական, բայց յետոյ գործածութեան
մէջ մտնելով անընդհատ աշխատում է մինչև ներկայ ժամանա-
կըս:

Այս տպարանը, որ միննոյն ժամանակ վանքի պաշտօնա-
կան մամուլն է, հաստատութեան օրից մինչև այժմս, բացի
պաշտօնական գործերից և բրոշիւրներից, տպագրել է և 44
գիրք, որոնց մի մասն կրօնական բովանդակութիւն ունի, միւս
մասն էլ զպրոցական դասագրքեր են:

1892 թւին, վանքիս առաջնորդ՝ Նսայի արք-եպիսկոպոս
Ասատուսծատրեանը Թիֆլիսից բերել տուեց նորաձոյլ յարմա-
րաւոր տառեր և հին մաշուածների տեղը մոտրեց ի գործա-
դրութեան: Հին տառերով տպագրածների զլուս գործոցն է
երկհատոր «Պատմ. Նոր-Ջուղայու»-ն, աշխատ. Յար. Տէր-Յով-
հանեանցի, իսկ նոր տառերով տպագրածների մէջ՝ «Աւագ-շա-
րաթ»-ը:

ՏԻԳՐԱՆ Թ. ԱՐԳԱՐԵԱՆՑ